«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Բնաշխարհն ու մարդը Համո Սահյանի պոեզիայում
ԱՌԱՐԿԱ	Հայ գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Օվսաննա Գասպարյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	«Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ԳԼՈՒԽ 1. Համո Սահյան. Կենսագրական տեղեկություններ ստեղծագործության ընդհանուր բնութագիրը----------5

1.1 Կենսագրական տեղեկություններ ----------5

1.2 Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը ----------6

ԳԼՈՒԽ 2 . Բնաշխարհն ու մարդը Համո Սահյանի պոեզիայում. բնություն - մարդ ներդաշնակությունը ----------9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրյան կիրճերից մեկում ծվարած Լորից եկավ Հ. Սահյանը:Սոսկ բնանկար չէ,որ Սահյանը բերեց մեր պոեզիային, այդ բնանկարների ծալքերում,նրա ամենախոշոր շերտերում մի արդար ու բարի,մեծ ու ազնիվ հոգու շարժում կա, հոգու ամբողջ մի պատմություն

Վահագն Դավթյան

Թեմայի արդիականությունը: Բնությունն ամբողջության մեջ մարդու գործունեության միջավայրն է:

Ինչպես Սահյանն է ասում՝»Անտառն իմ մեջ է, ես՝ անտառի»:

Բնության թեման դարեր շարունակ հետաքրքրել է բանաստեղծներին ու

արվեստագետներին:

Նրա պատկերումը լուսանկարների միջոցով, արվեստում, յուրահատուկ բառերով,

գույներով ու նոտաներով խոսում է այն մեծ

ուժի մասի, որով մարդը բնությունը կապում է գեղեցկության հետ:

Կյանքն օրեցօր զարգանում է և առաջընթաց ապրում:Մարդու կապը հողի, ջրի, բնության հետ երկրորդական պլան է մղվում: Գիտատեխնիկական վիթխարի հեղաշրջումը ամենուրեք փոխում է մարդու մտածողությունն ու հոգեբանությունը, նրա վերաբերմունքը բնության, շրջապատի,կյանքի և երևույթների նկատմամբ:

21-րդ դարի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանի պայմաններում մարդու կյանքի անբաժանելի մասն են դարձել ՏՀՏ ու գործիքները: Այդ ամենն էլ հաճախ հանգեցնում է նրան, որ նա հեռանում է բնությունից, որի հետ կապը անխզելի է. մարդն ինքնին հենց բնությունն է, նրա մի մասնիկը: Այդ կապի խախտումը շատ վատ է անդրադառնում

մարդու ձևավորման, ճաշակի զարգացման, գեղեցիկի ընկալման, աշխարհաճանաչողության, արժեքային համակարգի ձևավորման գործում: Մարդը, կամա-ակամա հեռանում է բնությունից, դառնում օտար, դրա պատճառով էլ դատարկվում և արժեզրկվում է: Ճանաչելով բնությունը՝ մարդը ճանաչում է ինքն իրեն: Իսկ Սահյան-բանաստեղծը լավ է ճանաչում բնությունն ու մարդկանց, աշխարհի չարն ու բարին. նրա գործերը երբեք չեն կորցնում իրենց արդիականությունը...

Նպատակը: Այս հետազոտական աշխատանքի նպատակն է երեխաներին մոտեցնել բնությանը, ցույց տալ մարդու և բնության միաձուլումը Սահյանի պոեզիայում,որը ընթերցողին պարգևում է բնության հետ հաղորդակցվելու, Աստծուն մոտենալու, մարդկային նախաստեղծ պատկերը վերագտնելու բացառիկ հնարավորություն, որի կարիքը ժամանակակից մարդը օրեցօր էլ ավելի սրբությամբ է զգում:

Աշակերտին կապելով բնության հետ՝նրա մեջ կծնվի հայրենասիրություն ու մարդասիրություն, բարություն ու համբերություն:

Խնդրին պետք է ուշադրություն դարձնի թե՛ ընտանիքը և թե՛ դպրոցը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար կարելի է առաջնորդվել հետևյալ կետերով՝

- **ՏՀՏ գործիքներ կիրառելով՝ երեխաներին լսելի դարձնել բնության մեղեդին, երանգները, զգալ տալ բնության բույրերը,շունչը, մոտեցնել նրան իր էությանը:**
- **Խորացնել աշակերտների և բնության միջև եղած կապը**
- **Երեխաների մոտ բարձր գեղագիտական ճաշակ ձևավորել բնության պատկերների միջոցով:**
- **Արժևորել բնության կարևորությունը և ազդեցությունը մարդու առողջ ապրելակերպի վրա:**
- **Ինչու չէ, հայրենասիրության դաստիարակում բնության պատկերների միջոցով:**

ԳԼՈՒԽ 1. Համո Սահյան. Կենսագրական տեղեկություններ, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

1.1 Կենսագրական տեղեկություններ

Համո Սահյանը /Հմայակ Սահակի Գրիգորյան/ ծնվել է 1914թ., Սիսիանի շրջանի Լոր գյուղում:Մանկության տարիներին ապրել է իր ժամանակի ու միջավայրի տարեկից երեխաների նման:»Հինգ տարեկանից եղել եմ հորս առաջին օգնականը գյուղական բոլոր աշխատանքներում. Հորթարածի ճիպոտից մինչև սերմնացանի գոգնոցը»: Մանկական տպավորությունները, գյուղական կենցաղի իմացությունը, բնության ճանաչողությունը այն հարուստ պաշարն են, որ հետագայում սնել են Սահյանի ստեղծագործությունը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1939թ. «Խորհրդային գրող ամսագրում»: 1941թ. Մեկնել է ռազմաճակատ և մինչև 1945թ. կռվել ռազմածովային նավատորմում:Որպես զինվոր ու բանաստեղծ՝ Սահյանն անմիջականորեն ապրեց ու զգաց պատերազմի ողջ մղձավանջն ու ողբերգությունը, սակայն այդ թոհուբոհի մեջ անգամ բանաստեղծի հոգու պրիզմայով անցնում էր հայրենի բնաշխարհը, լսվում էր բնության կանչը: Եվ ստեղծվում է «Նաիրյան դալար բարդի» ստեղծագործությունը, որը երգ է հայրենիքի նկատմամբ ունեցած կարոտի, բնության հավերժության ու հաղթանակի մասին:

Պատերազմի ավարտից հետո վերադառնում է Բաքու, այնուհետև տեղափոխվում Երևան և աշխատանքի անցնում «Ավանգարդ» թերթում:

Բարձրարվեստ թարգմանություններով հայերեն է թարգմանել Ա. Պուշկինի,
Ս. Եսենինի, Ա.Տարկովսկու, Գ.Լորկայի և ուրիշների ստեղծագործությունները:

Աշխարհընկալման անմիջականությամբ, բանաստեղծական անկաշկանդ կեցվածքով, ասելիքի հստակությամբ ու դասական պարզությամբ Հ. Սահյանն բացառիկ տեղ է գրավում հետչարենցյան շրջանի ստեղծագործությունների մեջ:



1.2 Ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

Սարյանական բանաստեղծական աշխարհին բնորոշ են մարդու և բնության հարաբերության, հայրենի հողի, կյանքի անցողիկության ու արարչագործ բնության հավերժության թեմաները:

Սահյանը ժառանգեց իր մեծ նախորդների՝Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Մ. Մեծարենցի ավանդները, ներշնչվեց ռուս բանաստեղծ Ս. Եսենինի ստեղծագործությամբ: Մի առիթով նա նշել է, որ բանաստեղծական իր համեստ ճանապարհի սկիզբը ցույց է տվել Հովհ. Թումանյանը, իսկ բանալին տվել է Ս. Եսենինը: Սահյանն իր ստեղծագործության մեջ համադրեց Թումանյանի բնութենապաշտությունը, անհետացող գեղեցկությունների նկատմամբ եսենինյան անամոք թախիծը, տերյանական նրբությունը:

Նրա ստեղծագործական ուղին անսայթաք ու միագիծ չի անցել: Անհատի պաշտամունքի տարիներին գրականությունը կաշկանդված էր պարտադիր թեմաների ու սկզբունքների շրջանակներում: Գրողն էլ իր մյուս ժամանակակիցների նման ստիպված էր նահանջել իր որոշ սկզբունքներից, հեռանալ սեփական ինքնությունից:

Նա առաջիններից մեկն էր, որ ամբողջ սրտով ողջունեց անհատի պաշտամունքի պսակազերծումը:20-րդ դարի 60-ական թվականները դարձան վերելքի տարիներ,քանի որ անձի պաշտամունքից ձերբազատված գրողներն իրենց անհատականությունը հաստատող ժողովածուներն ու գրքերը հենց այդ շրջանում հրատարակեցին:

Հ. Սահյանի ստեղծագործական ճանապարհին նշանակալից եղավ «Քարափների երգը» ժողովածուն, որտեղ բարձր արվեստով և ավելի ամբողջական ձևով դրսևորվեց նրա բնափիլիսոփայությունը մարդու և բության անքակտելի կապի մասին: Սահյանի կյանքի

բազմաթիվ իրողություններ արտացոլվել են նրա ստեղծագործություններում: Դրանցից շատերը բացահայտել են բանաստեղծի կերպարը, տրամադրությունները, կյանքի բազմաթիվ իրողություններ, բնություն-մարդ կապը:

«Որոտանի եզերքին» ժողովածուն էլ ընթերցողի առջև բացում է հայրենի եզերքի մտերմիկ անկյունը, զմրուխտե հեռուները, քարափները, արծիվների թռիչքը, «ուր մարդն ամպերին վերից է նայում»: Ու սահյանական պատկերավորման միջոցներով ստեղծվում է հայրենի բնությունն ու այնտեղ ապրող մարդկանց կերպարները:

Սահյանի ստեղծագործությունը, շնչելով ու ապրելով ազգային ոգով, դարձավ մեր ժողովրդի կենսագիրն ու ժամանակագիրը: Նրա ստեղծագործությունը կարծես հայի կյանքի հանրագիտարան լինի, որից շատ բան կարելի է սովորել և տեղեկանալ հայ ժողովրդի վարքուբարքի, կենցաղի, ազգային հոգեբանության ու մտածողության մասին:

Հայրենիք, մարդ, բնություն, թեման Սահյանի ստեղծագործություններում արդիական նշանակություն ունի:Այն տալիս է շատ հարցերի պատասխաններ:

Սահյանական լավատեսությունը փոխանցվում է ընթերցողին,ցավը փարատվում է «նաիրյան հոգևոր ամուր բերդի»՝ հոգևոր Հայաստանի նկատմամբ անխախտ հավատով և հայրենասիրական դաստիարակությունն ամրապնդվում է բանաստեղծական խորհրդանշային շղթայով՝»նաիրյան դալար բարդուց» մինչև «նաիրյան հոգու բերդ»:

Հայաստանի խորհրդանիշներն են բարդին, փշատենին, մասրենին, ժայռերը, քարերը:Սահյանի պատկերած աշխարհը խորապես ազգային կնիք ունի: Հայաստանի բանաստեղծական պատկերը բազմաբովանդակ է, որ իր մեջ ներառում է Հայաստանի աշխարհագրությունը, պատմությունը, ճակատագիրը:»**Մասրենի», «Փշատենի», «Մի բուռ ես...»...**

Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում
Ջրերի մեջ է ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Մասրի մի թուփ է գլխիվայր բուսել,
Որ դալարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:

Սահյանի պոեզիայում Հայաստանի բնությունն էլ կարծես ազգային խառնվածք ունի. լեռները, ժայռերը, քարերն ու ջրերը ոչ միայն ձևավորել են իրենց միջավայրում ապրող հայ մարդու բնավորությունը, այլև իրենք էլ իրենց մեջ կրում են նրա պատմական բախտի ու քաղաքական երազանքների արձագանքները:Սահյանի կյանքի վերջին տասնամյակներում օրվա հուզող խնդիրներն արտահայտվում են այլաբանական ու փոխաբերական

պատկերների միջոցով՝»**Խիղճդ մեռնի աշխարհ, մուխդ մարի», «Թող աշխարհը ցավ չունենար», «Թող չքնի հանկարծ»:**Այս գործերում բանաստեղծն ապրում է իր ժամանակի այրող խնդիրներով: Նրան մտահոգություն են պատճառում Երկրիր մայրակի ապագան, տիեզերական պատերազմների վտանգը, մարդկային արատների կուտակումը, առաքինության ճանապարհից շեղվելը:

Բանաստեղծը խորին ցավով արձագանքեց նաև Արցախի պատերազմին: Պատմության փորձն աչքի առաջ՝գրողը հավատով էր նայում իր ժողովրդի ապագային: **«Եվ պիտի լինես»** բանաստեղծության մեջ գրում է.

Եվ պիտի լինես,
Հավիտենության խորհուրդը վկա,
Քանի կան ազգեր, և աշխարհը վկա:

Սահյանի քնարական հերոսը էլ Հայաստանը կրում է իր հոգու մեջ և այդ չափանիշով է նայում աշխարհին ու մարդկանց:

«Ինձ բացակա չդնեք» բանաստեղծություն – հորդորն էլ ուղղված է արդեն ոչ թե ընթերցողին, այլ հարազատ բանաստեղծական աշխարհի մշտական խորհրդանշաններին՝ հարազատ ժողովրդի պես հայրենի հողին հաստատուն կանգնած, սակայն մշտապես շարժման մեջ գտնվող քարափներին:

Բանաստեղծը հեռանում է,սակայն ոչ թե խառնվում է մայր հողին, ինչպես հայտնի բանաստեղծության հերոս պապը,այլ դառնում է քարափների մասը, վերածվում յուրօրինակ քարե պատարագի, որի քրիստոնեական խորհուրդը հաղորդության միջոցով արարչի հետ հաղորդակցումն է:



Գլուխ 2. Բնաշխարհն ու մարդը Համո Սահյանի պոեզիայում. բնություն-մարդ ներդաշնակությունը

Բնության թեմային անդրադարձել են շատ բանաստեղծներ, բայց նրանցից ամեն մեկը յուրովի է զգացել, պատկերել բնության հրաշքները: Բնությունը գեղեցիկ է իր գույներով, լույսով, ջերմությամբ, տարերքով, որի դեմ անզոր է մարդը, ինչքան էլ կռիվ է տալիս, փորձում է սանձել, նվաճել իր իրավունքը նրա հանդեպ: Այդ մարդը բնության գլուխգործոցն է, անբաժան մասնիկը,որն էլ ձևավորում է նրա հոգեբանությունը, մտածելակերպը, արժեհամակարգը:Այդ ամենազոր բնությունը իր օրենքներով կարգադրում է, հակադրվում քաղաքակրթությանը և փորձում իր մաքրությամբ ապաքինել մարդկությանը:

Բնությունը Համո Սահյանի պատվանդանն ու զինանոցն է եղել, որտեղից գրողը վերցրել է իր գույները, ձևերն ու պատկերները:

Բնության սովորական երևույթները ուրիշ գույն ու երանգ են ստանում Հայաստանում, ուրիշ բնավորություն ունեն գետերը, քարափները, մասրենին,հաղարջի ու մոշի թփերը: Ամբողջ բնությունը, որ պատկերում է Սահյանը, քարեղեն ու ժայռեղեն,լեռնային ու հայկական երգ է:

Համո Սահյանը ստեղծել է քարափների, ջրվեժների ու ծիածանների գունագեղ հրավառություն, որտեղ ապրող մարդն սքանչանում է այդ գեղեցկությամբ, փորձում է գտնել իր տեղը բնության մեջ, զգալ նրա շունչը, ելևէջները և դառնալ նրա անբաժան մասնիկը, նրա հետ ու նրա միջոցով բռնել հավերժի ճամփան:Իսկ արդեն իմաստնացած տարիքում կյանքի չարն ու բարին հասկանալ բնության միջոցով:

Սահյանն իր ընթերցողի առջև ներկայանում է պարզ, բայց միևնույն ժամանակ բարդ, ծանոթ ու հարազատ, հոգեբանական խոր վերլուծություններով: Սահյանը, մոտ գտնվելով բնությանը, մոտեցել է մարդ արարածին, նրա հոգուն՝հույզերով, վերելքներով ու վայրէջքներով ու տարերքով լեցուն.

Դու հողածին, դու և Աստված, Հ.Սահյան Կանչե,կռունկ

Դու և հաղթող, դու և պարտված, Մարդ Երևան 1973թ. էջ 354

Դու անտակ վիհ, դու և բարձունք

Դու բնության անքննելի,

Դու բնության մի պատառիկ,

Դու հնություն հնամենի ու դեռ գալիք:

Բանաստեղծը բնության միջոցով է ասում իր ասելիքը, նրա միջոցով ենք ընկալում գեղեցիկը, վեհը, մարդկայինը: Նա ճանաչում է բնության ամեն մի մասնիկը, լսում ամեն մի տերևի շրշյունը, անձրևի ու քամու ձայնը.

Աչքն ու ականջն եմ ես մայր բնության,

Գիտակցությունը նրա մարմնավոր...

Բանաստեղծը մեծ վարպետությամբ է կարողացել համադրել մարդուն բնության մեջ և բնությունը՝ մարդու:

Ռուս թարգմանիչ Մարչետոն այսպես է բնութագրում Սահյանի՝ մարդ-բնություն կապը.»**Այստեղ ամեն ինչ մարդ է. Ժայռը մարդ է, մասրենին մարդ է, Որոտանը մարդ է»:** Յուրահատուկ գնահատական է տվել նաև Վահագն Դավթյանը.»**Նա ինքն է իր պատկերած քարափը, ժայռը, անտառը, ինքն է իր քարանձավը, մասրենին, գետը, աղբյուրը, ծիածանի գույները, ամպի ծվենը»:**

Հեղինակի համար բնությունը մի մեծ ընտանիք է. Հայրենի բնաշխարհը, այդտեղ ապրող մարդիկ ուղեկցել են նրան ողջ կյանքում .»**Լորում չեմ ապրում, Ապրում եմ Լորով, Լորը լիքն է միշտ իմ հոր ու մորով»:**

Յուրաքանչյուր թուփ, ծառ ու ծաղիկ, ժայռ ու քարափ գույն ու երանգ է ստանում, վերածվում է յուրահատուկ կտավի:

Գեղանկարիչ չէ Սահյանը, բայց նա նկարում է բառերով,և նրա յուրաքանչյուր բառ ունի իր յուրահատուկ գույնը,որով էլ ամբողջանում է նրա բնապատկերը և այդ բնապատկերի հետ սերտորեն կապված մարդը: Բնության պատկերների նկարագրությամբ նա միաժամանակ կարողանում է բառերի միջոցով ներկայացնել հարազատ բնաշխարհի շարժն ու շունչը,աչքերիդ առջև հառնում է գետի հոսքը,լսում ես առվակի քչքչոցը, անտառի խշշոցը,ամպրոպի ճայթյունը,խարույկի ծուխը և դրանց կողքին տեսնում ես նաև հավերժական ուղեկիցին՝ մարդուն:Նրա համար բնությունը մերթ մանկության վերհուշն է արթնացնում,մերթ մարդկային կյանքն ուզգացմունքներն է իմաստավորում,մերթ դառնում է աշխարհընկալման և ինքնաճանաչման միջոց,մերթ հասարակական երևույթների մասին խոսելու առիթ:

Միխայիլ Պրիշվինը իր գրառումներում շատ նրբանկատորեն է նկարագրում բնությունը,որի շնորհիվ կարող ենք կարծիք կազմել նրա անթերի նկարագրի մասին,կարդալով հետևյալ տողերը.**«Բնությունը հասկանալու համար պետք է լավ իմանաս մարդուն և այդ ժամանակ բնությունը կլինի հայելի,որովհետև մարդն իր մեջ բովանդակում է համայն բնությունը»**:Այս միտքը բնորոշում է Սահյան բանաստեղծին: Ընդգրկուն է Սահյանի՝ մարդու և բնության կապը: Նրա հերոսի ինքնությունն ամբողջովին ձևավորվել է բնության պատկերի համաձայն: Բնությունն է նրան տվել»ինքնության պատիվն ու թանկությունը»: Հեղինակի պատկերած բնաշխարհում մարդը, հողը, կենդանին, քարափը, մասրենին ներդաշնակության մեջ են, լրացնում են միմյանց:»Օրը մթնեց>.,»Պապը», «Քարափը» ստեղծագործությունների հերոսները բնավորության իրենց գծերով բնության հարազատ զավակներն են: Նահապետական մեծ գերդաստան, գեղջկական ընտանիքի պարզություն, բայց խոր թախիծ.այդ հարազատ մարդկանցից այժմ ոչ մեկը չկա, այդ ամենն անցել է անվերադարձ, շատ բան է փոխվել մարդկանց կյանքում անցել են այդ պարզ ու իմաստալից ժամանակները, որով ապրել են մարդիկ: Հեղինակը բանաստեղծությունները գրելիս կարծես ոչ թե բառեր է օգտագործել, այլ ներկապնակ ու շռայլ գույներով ներկայացրել բոցավառվող անտառը, հայ ժողովրդի տոկունությունը խորհրդանշող մասրենին, Որոտանն ու Գյազբելը:»Առանց իր լեռան ու եզի, առանց իր մասրենիի ու քարափների, առանց»կանաչ

աշխարհի» նա մենակ է ու որբ»: Նա խոսում է բնության հետ, հասկանում նրա լեզուն: Իսկ աշնան պատկերները Սահյանի բանաստեղծական արվեստում ուրիշ շունչ ու ոգի են ստանում:

Աշնանամուտի ջրերը բարակ

Նորից մասուր են բերում սարերից,

Սպիտակ ու պաղ փրփուրների մեջ

Ալ կարմիր հուր են բերում սարերից...

Հեղինակն այնքան է կարևորում բնություն-մարդ կապը, որ շնչավորում է բնության ամեն մի մասնիկ. կենդանի էակ է դառնում անտառը, ամեն ինչ շնչում է,մարդուն բնորոշ հատկանիշներ ձեռք բերում, իսկ բանաստեղծն էլ իր պատկերավորման միջոցներով դառնում է ընթերցողի ու բնության թարգմանը.

Անտառում ամպի ծվեններ կային,

Կապույտ մշուշներ կային անտառում,

Օրոր էր ասում աշունն անտառին,

Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Սունկը, եղնիկը, որսկանը, փայտահատն ու անտառապահը, խարույկը անտառին բնորոշ մթնոլորտ ե ստեղծում, բացում սովորական աչքի համար անտեսանելի հարուստ մի աշխարհ, և բնապատկերը ձեռք է բերում ճանաչողական արժեք:

Յուրաքանչյուր տողի ու պատկերի հետևում երևում է գրողի հուզական ներաշխարհը:Անտառային այս առօրյան «խորին խորհուրդ» ունի. այստեղ էլ կյանքն ու մահն ապրում են կողք կողքի, ինչպես կյանքում, սրանով գրողը հաստատում է բնության

ու տիեզերքի միասնականությունը: Սահյանի ստեղծագործության քնարական հերոսի կենսագրությունն անգամ սկսվում է բնաշխարհից:

Նման են Սահյանի և Մեծարենցի բնության երկերը, բայց նաև տարբեր. Մեծարենցի հոգում խաղաղություն է տիրում, իսկ Սահյանի աշխարհում փոթորիկ է ու կռիվ:Այս ամենը շատ լավ է արտահայտված « Անձրև» բանաստեղծության մեջ. Նախազգուշացում, անձրև, խաղաղություն.

Ինչ կատարվեց... Երկնքում

Քանդուքարափ է,

Ամպերը փուլ են գալիս,

Տեղատարափ է:

Սահյանի խոր փիլիսոփայությունն էլ է անցնում բնության պրիզմայի միջոցով: Անցած կյանքի հանրագումարի,կյանքի և մահվան, անմահության ձգտման հարցերի պատասխանը փորձում է գտնել հավերժ ու նրդաշնակ բնության մեջ:

Բնության մեջ տեսնում ենք հայի և Հայաստանի ճակատագիրը: Մասրենին դիմացել է բնության արհավիրքներին, իր արմատներն ավելի խորացրել,պտուղ է տվել: Այդպես էլ հայ ժողովուրդը. թշնամին հողմակոծ է արել, հալածել, փորձել ոչնչացնել,բայց նա ավելի ամուր է կառչել իր հողին,իր մի բուռ քարքարոտ տարածքին, երկուսն էլ անհող, բայց երկուսն էլ ամուր իրենց արմատներով:

Չի զիջել նա իր արնմատը վերջին

Արհավիրքների զարկին անխնա,

Ճոճվել է անգամ ճնճղուկի շնչից,

Բայց հողմի շնչին դիմացել է նա:

Բայց հեղինակը մտահոգության մեջ է. Մի ժամանակ թանկ համարվող շատ երևույթներ կորցրել են իրենց արժեքը: Մասրենու պտուղը տեղ չունի մարդկանց կյանքում, «այս երես առած դարում» մարդիկ չեն նկատում իրական գեղեցկությունը:

Քարափն էլ, նման ժողովրդական մի նահապետի, վայելում է իր արժանի հարգանքը, նա է գլխավորը, նրա շուրջն են հավաքվում բոլորը: Նա արդարադատ է, ազնիվ, առատաձեռն ու շատ նման է բանաստեղծի պապին՝ Խաչիպապին՝ հողի այդ անխոնջ մշակին, որը բնության նման անշահախնդիր ու բարի է.»չի դավաճանում հյուրընկալության հինավուրց ոճին»:Բայց

երբեմն չարաշահում են բարությունը ,և մարդ նաև իր մասին պետք է մտածի «ինքն իր հետ մնա, իր ներսը նայի»: Հեղինակի բնապատկերի տարրերը՝հերոսները, անուններ ունեն. Գյազբել, Աղոթարան սար, Որոտան, Լորագետ, Բասուտա գետ, Տատնա ձորը:Սրանք յուրահատուկ ներդաշնակության մեջ են իրար լրացնում:

Սահյանի խոր փիլիսոփայությունն էլ է անցնում բնության պրիզմայի միջոցով: Անցած կյանքի հանրագումարի,կյանքի և մահվան, անմահության ձգտման հարցերի պատասխանը փորձում է գտնել հավերժ ու նրդաշնակ բնության մեջ:

Թեման ուսումնասիրելու ընթացքում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, ինչպես Սահյանն էր ասում «այս երես առած դարում» մարդիկ չեն նկատում իրական գեղեցկությունը, մարդն օտարվում է բնությունից, իսկ մարդու և բնության կապի խզումը հանգեցնում է վատ հետևանքների թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր և թե՛ արժեհամակարգի ճիշտ ձևավորման հարցում:

Հետևելով բնության երևույթներին, ներդաշնակ օրինաչափություններին՝ բանաստեղծը ցանկանում է այդ օրինաչափությունը տեսնել և մարդու մեջ

Մարդը, վերափոխելով մայր բնությունը, կատարելագործելով այն, ինքն էլ վերափոխվում ու կատարելագործվում է: Սահյանը գտնում է, որ միայն մարդու և բնության ներդաշնակ միասնության մեջ է մարդու զորությունը և հոգևոր հարստությունը հոգևոր անդորրն ու խաղաղությունը.

Եվ ի՞նչ է տվել ինձ բնությունը,
Իր քարափների համբերությունը,
Իր խոնճի առաջ իր գերությունը,
Իր անդունդների տարողությունը,
Սեփական վերքերն ապաքինելու կարողությունը

Մարդը ձուլվում է բնությանը և հաստատում է իր մեջ մարդկայինն ու մարդասիրականը:
Բանաստեղծը հիմնավորում ու ամրապնդում է մարդու և բնության դաշինքը:
Սահյանի ստեղծագործության քնարական հերոսի կենսագրությունն անգամ սկսվում է բնաշխարհից: Նա ուժ ու ներշնչանք է ստանում հայրենի հողից:Ամեն մի ստեղծագործության մեջ չափանիշը մարդն է, նա առաջ է գնում ժամանակի հետ և հասկանում է,որ կյանքը ակնթարթ է տիեզերական շարժման մեջ, որ պետք է ապրել, զգալ յուրաքանչյուր պահը:

Բնություն-մարդ կապը մեզ տանում է դեպի բնություն- հայրենիք կապը: Սահյանը գրել է «Երեխայի մեջ հարկավոր է ամենից առաջ տիրոջ զգացում սերմանել և ասել՝ այս հողը քոնն է: Առանց հողի հայրենասիրության զգացողություն չես կարող ունենալ: Հայրենասիրության այբուբենը հայրենի հողի վրա տուն շինելը և նրա մեջ ապրելն է»:

Ես իմ հետազոտական աշխատանքով փորձեցի այս խնդրին գոնե փոքր-ինչ լուծում տալ Համո Սահյանի՝ բնությանը նվիրված ստեղծագործությունների ուսուցմամբ:

Նկատելի էր, որ աշակերտների մոտ խորացավ կապը բնության հետ, նրանք արժևորեցին բնության կարևորությունը մարդու առողջ, գեղեցիկ, ճիշտ ապրելակերպում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս.Աղայան. «Համո Սահյան. Էսսե»

2. Հ. Թամրազյան. «Սովետահայ գրականության պատմություն»

«Լույս» հրատարակչություն, Երևան, 1984թ.

3. Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան. Հայ գրականություն, 12-րդ դասարան,2011թ.

4. Հ. Սահյան. «Քարափների երգը»

5. Հ.Սահյան. «Անտառում»,Պ ապը», «Անձրև», «Մասրենի»

6. Հ. Սահյան. «Կանչե, կռունկ», Երևան 1973թ.

7. Հ.Սահյան. «Ինձ բացակա չդնեք»